ՆՄՈՒՇ - ՕՐԻՆԱԿ

քրեական մասնագիտացման բաժնի մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերի և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների ենթաբաժնի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության թեստային տարբերակի

1. ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1.1. Պ-ն իր բեռնատարով՝ բեռնված փայտով, անտառից վերադառնում էր տուն: Ճանապարհին նա հանդիպում է համագյուղացի Մ-ին, ով, հասկանալով, որ Պ-ն ապօրինի ծառահատում է կատարել, ցանկանում է զանգահարել ոստիկանություն: Պ-ն, կարծելով, որ իր կատարած հանցանքը կարող է բացահայտվել, կացնով հարվածել և սպանել է Մ-ին: Գործի քննությամբ պարզվել է, որ Պ-ի արարքը հանցակազմ չի պարունակել (կատարված չի եղել զգալի չափերով): Ինչպե՞ս պետք է որակվի (որակվեն) Պ-ի արարքը (արարքները).

1) ☐ *սպանություն և այլ հանցանքը թաքցնելու նպատակով սպանության փորձ,*
2) ☐ *այլ հանցանքը թաքցնելու նպատակով սպանության փորձ,*
3) ☐ *այլ հանցանքը թաքցնելու նպատակով սպանություն,*
4) ☐ *սպանություն:*

(...)

1.20. (...)

2. ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ)

2.1. Քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին միջնորդությունները դատավորի կողմից քննվում են.

1) ☐ *անհապաղ, բայց ոչ ուշ, քան դրանք ստանալու հաջորդ օրը,*
2) ☐ *ներկայացվելուց հետո 72 ժամվա ընթացքում,*
3) ☐ *հնգօրյա ժամկետում,*
4) ☐ *մեկշաբաթյա ժամկետում:*

(...)

2.36. (...)

3. ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (ԱՅԼ ՀԱՐՑԵՐ)

3.1. Եթե ընդդատության կարգի խախտումը հայտնաբերվում է դատական քննության ժամանակ, ապա.

1) ☐ *դատարանն այլևս իրավասու չէ գործն ուղարկել ըստ ընդդատության,*
2) ☐ *կողմերի համաձայնությամբ դատարանն իրավասու է գործը թողնել իր վարույթում,*
3) ☐ *դատարանը կողմերի համաձայնությամբ իրավասու է գործն ուղարկել ըստ ընդդատության,*
4) ☐ *դատարանը պատճառաբանված որոշմամբ իրավասու է գործը թողնել իր վարույթում:*

(...)

3.24. (...)